

ՈՒՏՈՊԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԽՏԱՆԻՇ

ՄԵՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Թեև «ուտոպիա» եզրույթը սովորաբար ներհակ տրամադրություններ է առաջացնում, բայց, ինչպես նշում էր Մ. Էլիադեն, աշխարհում ապրելու համար այն պետք է նախագծել ու հիմնել: Թե ինչպիսին կլինի ապագայի այդ նոր աշխարհը, կախված է անցյալի և ներկայի նկատմամբ վերաբերմունքից, որն էլ, իր հերթին, դառնում է ապագա հասարակության կառուցարկման ուղևագիծ: Այդ տեսակետից ուտոպիան սոցիոմշակութային, գիտական, գրական և փիլիսոփայական այն ստեղծագործություններից մեկն է, որը մարդուն հնարավորություն է ընձեռում իդեալականի դիտանկյունից պատկերացնելու իրեն սպասվող ապագան: Իդեալական հասարակության և հասարակարգի ուտոպիական նախագիծը մարդկանց թույլ է տալիս ստեղծելու եղածից արմատապես տարբերվող բարոյական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական այլ կարգ ու կարգավորվածություն: Ուտոպիստ մտածողները (Պլատոն, Թ. Մոր, Թ. Կամպանելլա և այլք) ոչ թե երագում էին անմիջապես ստեղծել իրենց պատկերացումներին համապատասխան իդեալական հասարակություն, այլ ընդամենն ազդել մարդկանց բանականության և հոգու վրա, նրանց ներշնչել, որ եթե մարդիկ իրենց արարքներում շարժվեն իդեալներով, ապա կարող են ստեղծել ավելի կատարյալ սոցիալական աշխարհ: Այլ կերպ ասած՝ սոցիալական իրականության վրա ուտոպիայի ազդեցությունը ոչ այնքան ուտոպիական նախագծի իրագործումն է, որքան նրա առավել կարևոր գործառույթը՝ սոցիալական երևակայության զարգացման ու զանգվածների ներքին էներգիայի ուղղորդումը: Իսկ դա նշանակում է, որ ուտոպիան մարդկային գիտակցության որոշակի վիճակ է, որի ազդեցության ներքո մարդը միշտ է գտնվում:

Գիտական հեղափոխության և գիտատեխնիկական նվաճումների շնորհիվ ժամանակակից աշխարհում կյանքի են կոչվում երբեմնի ուտոպիական թվացող մի շարք նախագծեր, ինչը փաստում է, որ ժամանակակից աշխարհում գնալով խորանում է գիտության և ուտոպիաների «համագործակցությունը», ուտոպիան գիտությունը հարստացնում է վերգիտական վարկածներով և գաղափարներով, որոնք նպաստում են գիտության զարգացմանն ու առաջընթացին: Այլ կերպ ասած՝ ուտոպիան առաջադրում է գաղափարներ ու նախագծեր, որոնք խթանում են գիտության զարգացումը: Գիտության և ուտոպիական նախագծերի այս «մերձեցումը» նպաստեց իդեալական հասարակարգի մասին պատկերացումները մարդկային ապագայի հետ նույնացնելու գործընթացին, ինչն էլ, իր հերթին, ուտոպիան դարձրեց ապագայի կանխատեսման «յուրատեսակ գիտություն»: Այս համատեքստում իդեալի և իրականության պայքարը

կարծես վերածվում է անցյալի և ապագայի միջև «հակամարտության»։ Պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ ուտոպիան հաճախ բնութագրվում է որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող, բայց դեռ չիրականացված իրականություն։ Պետք է նկատել, սակայն, որ ուտոպիայում ապագան ոչ թե իրականության անմիջական շարունակությունն է, այլ դրա այլընտրանքը։ Հետևաբար, ուտոպիայի մեջ պատմական հիշողությունն ու ավանդույթներն այնքան էլ մեծ տեղ չունեն, քանի որ նոր հասարակությունը եղածի այլընտրանքն է, որտեղ կյանքն այլ է. պատմությունը դրա համար ընդամենը վատ անցյալ է։

Թեև ուտոպիական նախագծերն այլընտրանքային են և միշտ չէ, որ ամբողջապես իրականացվում են, բայց կարող են մեծ ազդեցություն թողնել սոցիալ-պատմական գործընթացների վրա։ Ինչպես նշում է Կ. Մանհեյմը. «Ուտոպիաներ են կեցության նկատմամբ այնկողմնային բոլոր պատկերացումները, որոնք երբևէ սոցիալ-պատմական կեցության վրա վերափոխող ազդեցություն են ունեցել»¹։ Դեռ նոր ձևավորված ուտոպիական գաղափարները, որոնք այսօր մեզ համար շատ սովորական են դարձել, սկզբնապես ժամանակակիցներին թվում էին անիրական։ Ուտոպիայի լավագույն արդյունքը նոր հնարավորություններ բացահայտելն ու դրանք մարդկությանը հասանելի դարձնելն է։ Առկա սոցիալական կարգ ու կարգավորվածությունից դուրս գալը սովորաբար դժվար և երկարատև գործընթաց է և հաճախ թվում է անիրագործելի։ Պետք է նշել, սակայն, որ նման ընկալումը բնորոշ է միայն որոշակի սոցիալական կարգին։ Այլ սոցիալական տարածության համար դրանք կարող են բավականին կենսունակ լինել։ Որպեսզի նորարարական գաղափարները գնահատվեն ըստ արժանվույն, նախ պետք է ընկալվի և գիտակցվի, որ սոցիալական կարգերը բազմազան են և տարբերվում են միմյանցից։ Եթե «ուտոպիան» չընդունենք զուտ որպես ստեղծագործություն, որում վերջնականորեն շեշտադրված են նոր հասարակության բոլոր մանրուքներն ու ավարտուն վիճակը, հասկանա՞նք այնտեղ ի հայտ եկած և դեպի ապագան մայրող այլակերտ մոտեցումներն ու ուտոպիական գիտակցության փայլատակումները, ապա կունենանք ապագայի մասին տեսություն, որում առաջարկվող միտումները բավականին իրատեսական են, իսկ ճիշտ յուրացման դեպքում՝ գործուն։ Պետք է ընդունել, որ դարերի ընթացքում ինչպես ուտոպիաները, այնպես էլ այդ երևույթի ընկալումներն անընդհատ փոփոխվել են։ Նախնական շրջանում ուտոպիաներն ավելի հիշեցնում էին գրական ստեղծագործություններ, որոնցում ներկայացված էր իդեալական հասարակության մոդել, բայց հետագայում՝ սկսած 18-րդ դարից, այն ձեռք բերեց այնպիսի բնութագրիչ գծեր, որոնք թույլ են տալիս ուտոպիան համարել ապագային միտված սոցիալական նախագիծ, որի շնորհիվ հիմնովին փոխվում են ուտոպիայի դերի վերաբերյալ պատկերացումները։ Կարելի է ասել, որ ուտոպիական ստեղծագործությունները գրքեր են ներկայի մասին, սակայն, վաղվա դիտանկյունից. ուտոպիան առկա հարցերին պատասխանելու փորձ է ապագայի անունից։ Այն նաև արտացոլում է մարդկության լավագույն և ամենամահավանական հույսերն ու իղծերը։

¹ Маннгейм К. Идеология и утопия. М., 1994, с. 174.

Որոշ իմաստով պատմաբաններն ավելի շատ են թյուր տեղեկատվություն հաղորդել անցյալի մասին, քան ուտոպիստները՝ ապագայի: Դանկատելի է զրեթե բոլոր երկրների պատմության մեջ: Ուտոպիան սոցիալ-տնտեսական և իրավական գաղափարների ուրույն լաբորատորիա է, որից հաճախ օգտվում են օրենսդիր և գործադիր իշխանությունները: Ցանկացած պարագայում, լինի ուտոպիա, սոցիալական տեսություն թե նորարարական գաղափար, միևնույնն է, այն չի կարելի միանշանակորեն համարել լավ կամ վատ: Նրա որակական որպիսությունը պայմանավորված է շրջանառման ժամանակից ու ձևից:

«Ուտոպիստը մտածում է «կամ-կամ» տարբերակով, նա ոչ թե փորձում է փոխել հասարակական հարաբերությունները, այլ՝ վատը փոխել լավով: Նա քանդում է իդեալի և իրականության միջև կամուրջները, մինչև դրանց կառուցումը. մոմի տիրապետության ժամանակաշրջանում մտածում է համընդհանուր էլեկտրականացման մասին, և ոչ թե ուրիշների նման ստեղծում է նավթավառ»²: Այսինքն՝ բարեփոխումներ կատարող մարդն ու ուտոպիստը միմյանցից տարբերվում են այն բանով, որ առաջինը նորն ստեղծելու փոխարեն փորձում է ուղղել գոյություն ունեցող աշխարհը:

Սոցիալական ուտոպիայի արմատները հասնում են մինչև հնագույն ժամանակներ. դրանք արդեն իսկ առկա են մարդկության «ոսկեդարի» անուրջներում, ուստի որոշ գիտնականներ սոցիալական ուտոպիան համարում են հնագույն և հիմնարար առասպելներից մեկը: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ ուտոպիայի էությունական հիմքերն արմատավորված են մարդկային բնության մեջ և բխում են կոլեկտիվ անգիտակցականից, որի պարունակությունն այն արքետիպերն են, որոնց էությունն արտահայտվում է ոչ իդեալական կեցությունից դուրս գալու ու կատարյալ աշխարհի ստեղծելու ձգտմամբ: Հավանաբար հենց այդ մղումն էլ եղել է ուտոպիական նախագծեր կառուցելու ներքին խթանը: Սոցիալական իդեալներին ձգտելն ուտոպիայի տարբերակիչ և ամենակարևոր գիծն է. հավասարությունը, սոցիալական արդարությունը, ազատությունը, բանականության գերիշխանությունը, հասարակական և քաղաքական հարաբերությունների հորիզոնական կառուցարկումն այնպիսի իդեալներ են, որոնք արտահայտված են հունանիզմի, լուսավորականության, ժողովրդավրության, ազատականության, քաղաքացիական հասարակության և այլ ուտոպիական-սոցիալական նախագծերում: Համաշխարհային պատմության մեջ կարելի է մատնանշել բազմաթիվ օրինակներ, երբ իդեալի կորստի հետ մեկտեղ անկում է ապրում նաև հասարակությունը: Մի բան ակնհայտ է. ուտոպիան հասարակության կենսունակության յուրատեսակ ցուցանիշ է և վկայում է այն մասին, որ հասարակությունը փորձում է վերականգնել սոցիումի պիտոյական վիճակը, կառուցել ամբողջական հասարակական նոր համակարգ, որը պետք է ունենա իր օրենքներն ու առաջընթացի ուրույն ծրագիրը: Դա մի փոքր հեռուն նայելու, հասարական բացերը հասկանալու խթան է և կոչված է հուշելու, որ դրանք կան և կարելի է բուժման ուղիներ գտնել:

² Шацкий Е. Утопия и традиция. М., 1990, с. 33.

Սոցիալական ուտոպիաները սովորաբար ի հայտ են գալիս և տարածվում սոցիալ-քաղաքական ճգնաժամների կամ պատմության այնպիսի փուլերում, երբ խաչվում են երկու տարբեր դարաշրջաններ, մշակույթներ ու կրոններ, երբ հասարակությունը հայտնվում է տարբեր շրջափուլերի, կենսաձևերի խառնարանում՝ կորցնելով իրեն հատուկ բնականությունը, ավանդույթները, անձեռնմխելիության զգացումը, այսինքն՝ հասարակության համար անցումային այն փուլերում, երբ դեռ նախկինը գործում է, իսկ նորը վերջնականապես հաստատված չէ: Անցումային այդպիսի հասարակություններում վերակերտման են ենթարկվում պետական և քաղաքական համակարգերը, տնտեսական ոլորտը, հասարակության սոցիալական կառուցվածքը, արժեհամակարգը և այլն³: Ուտոպիան չափորոշիչներից մեկն է, որ ահազանգում է խորը խնդիրների առկայության մասին, ուստի մասնագիտական գրականության մեջ հաճախ բնութագրվում է որպես հասարակական կարգի ճգնաժամի ախտանիշ: Պատահական չէ, որ ուտոպիական գիտակցությունն առավել ակտիվանում է սահմանային, ճգնաժամային իրադրություններում և կարծես ետ է մղվում սոցիալական իրականության անխռով և աներեր վիճակում: Բեկումնային փուլերում հասարակության հայացքն ինքնըստինքյան սկզբում է դեպի սեփական կեցության հիմքերը, տեղի է ունենում դրանց վերաարժևորում և վերաիմաստավորում: Այս գործընթացի կարևոր բաղադրատարրն ուտոպիական գիտակցությունն է: Նմանօրինակ դրություններն ստիպում են մտորել հասարակական կարգի իդեալական վիճակի մասին. ուտոպիայի ստեղծման առանցքակետ է դառնում տվյալ սոցիումի այդժամյա վիճակը: Սոցիալական աղետների ժամանակ մարդիկ անհավատալի շրջադարձերի հույսով և սպասումով ձգտում են ստեղծել նորը. դա ինքնատիպ փախուստ է անցանկալի իրականությունից: Դրանք պատմության այն փուլերն են, երբ առաջանում է մեծ, արմատական վերափոխումների անհրաժեշտություն: Ուտոպիան մի կողմից հուսահատության արտահայտություն է, իսկ մյուս կողմից՝ հույսի. այն ի սկզբանե ունի սոցիալական ակտիվության, կոնկրետ գործողությունների դրդման միտում: Ստեղծված քաոսից, տարերայնությունից, որոնք բնորոշ են գրեթե բոլոր հասարակություններին, փախուստը հուսահատության հետևանք է, դա ախտանիշ է, որը գուժում է, որ ինչ-որ բան այն չէ, պետք են անհապաղ փոփոխություններ, առանց որոնց հասարակությունը չի կարող երկար շարունակել իր կենսագործունեությունը: Օգտվելով ուտոպիայի առաջարկած լայնարձակ մտային դաշտից ու նոր աշխարհից՝ մարդը գործում և կառուցարկում է իդեալականին ձգտող սոցիալական աշխարհ: Ուտոպիական գիտակցությունը ներթափանցում է հասարակական կյանքի բոլոր մանրուքների խորքերը, քանզի այն նպատակ ունի ստեղծելու նոր կառույց՝ նոր հիմնասյուններով:

Ուտոպիային ծնունդ տվող հիմքերից է շրջապատող աշխարհի և մարդու գիտակցության միջև առկա անհամատեղելիությունը: Երբ այդ գիտակցությունն այլևս չի ընկալում տեղի ունեցող իրադարձությունների ու փոխակերպումների տրամաբանությունը, ինչպես նաև կարևորությունն ու

³ Տե՛ս **Է. Զարությունյան**, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 18:

օգտակարությունը, առաջանում է այլ կերպ գործելու, տարերային ու անընթացելի իրերի կարգը փոխելու և քանդելու պահանջ:

Այս տեսակետից պատմությունը բացեիքաց ի ցույց է դնում ուտոպիական մտքի վերելքի և հասարակական-քաղաքական կարգի ճգնաժամերի աղերսները: Այդպիսի դեպքերում հեղափոխական փորձեր կատարողների համար ուտոպիան շատ հաճախ վերածվում է նաև գաղափարական գործիքի: Այսինքն՝ արտահայտելով որոշակի շահեր՝ ուտոպիան երբեմն դառնում է քաղաքական պայքարի ձև, միաձուլվում է սոցիալ-քաղաքական խնդրումներին և դրանց հաղորդում որոշակի ուղղվածություն:

Սոցիալական տեսությունները, գաղափարները գրեթե միշտ էլ ազդում են սոցիալական գործընթացների վրա և որոշարկում դրանց հետագա ուղին: Այդպիսի սոցիալական տեսություններից մեկն է ուտոպիան, որն ինքնատիպ դեր է կատարում ճգնաժամային իրավիճակներում: Եականն այն է, որ եղած պայմաններից ծնվեն նոր գաղափարներ ու պատկերացումներ, և հետևաբար՝ նոր կենսական պայմաններ: Բանն այն է, որ սոցիալական ծանր իրավիճակներում տեղի է ունենում ավանդական հասարակական կապերի խզում, խաթարվում են սոցիալական կեցության հիմքերը, առաջանում է անհեռանկարայնության սուր զգացում, և արդյունքում՝ աշխուժանում է ուտոպիական գիտակցությունը: Ելնելով այն բանից, թե հասարակական կարգի որ ոլորտն է ավելի վատթար վիճակում, տարբեր ժամանակահատվածներում հենց այդ ոլորտն է դառնում ուտոպիայի հիմնաքար (ոմանք անհրաժեշտ են համարում հիմնովին վերափոխել տնտեսական ոլորտը, մյուսները՝ քաղաքականը և այլն): Այսինքն՝ ուտոպիայի յուրաքանչյուր դրսևորում ածանցյալ է պատմական զարգացման կոնկրետ փուլից և սոցիալական տվյալ շերտի առջև դրված խնդիրներից: Գիշտ է, ուտոպիական գաղափարներ առաջադրողներն անհատ մտածողներ են, բայց դրանք ընդհանուր տրամադրվածության արդյունք են և համապատասխանում են «սոցիալական պատվիրատուի» ձգտումներին: Ինչպես նշում է Կ. Մանհեյմը, ուտոպիայի և կեցության միջև կա որոշակի դիալեկտիկական կապ, և յուրաքանչյուր կեցություն ձևավորում է տվյալ սոցիումի գաղափարական և հոգևոր պարունակությունը: Կեցությունը ծնում է ուտոպիաներ, որոնք քանդում են իրականության հիմքերն ու ձևավորում առավել կատարյալ իրականության նոր նախագիծ⁴:

Իմաստավորելով առկա կեցության անկատարության պատճառները՝ ուտոպիական նախագծի հեղինակը փորձում է վեր կանգնել իր ժամանակներից և շրջել պատմության ուղեծիրը: Այս իմաստով ուտոպիան առկա սոցիալական կարգի ու կարգավորվածության քննադատության մի յուրահատուկ միջոց է, որն անցյալի անդրադարձի օգնությամբ փորձում է ուղղել պատմության սխալները: Ուտոպիան նաև աշխարհը նորովի բացատրելու այնպիսի եղանակ է, որը հնարավորություն է տալիս ուրվագծելու վերափոխված ապագայի ինչ-ինչ հեռանկարներ: Ստեղծվելով կոնկրետ մտածողի կողմից և արտահայտելով սոցիալական կեցության մեջ եղած միտումները՝ արդեն շրջանառության մեջ դրված այդ գաղափարն աստիճանաբար վերածում է հասարակական գիտակցության, դառնում

⁴ Տե՛ս **МАННГЕЙМ К.**, նշվ. աշխ., էջ 170:

զանգվածների սեփականությունը՝ ձեռք բերելով կեցությունը վերափոխելու գործունեական ներունակություն:

Ուտոպիաներն օժտված են որոշակի ներքին վտանգներով, քանի որ դրանք երբեմն հրահրվում են իշխող վերնախավի կողմից, որոնք՝ որպես քաղաքական բեմահարթակի հիմնական խաղացողներ, փորձում են իրենց քաղաքական շահերին համապատասխան սոցիալական կարգ ու կարգավորման եղանակ մոդելավորել: Բացի դրանից, ուտոպիաները վտանգավոր են դառնում հատկապես այն ժամանակ, երբ հայտնվում է մեկը, ով հաստատականորեն հայտարարում է, թե ինչպիսի հասարակարգ է պետք ստեղծել և ինչպես մարդկանց երջանկացնել: Պատկերավոր ասած՝ ուտոպիան մարդկային գիտակցության որոշակի հիվանդություն է, որն իր ստեղծողի տեսանկյունից համարվում է «մարդկային հիվանդությունների» գլխավոր դարմանը:

Այս կամ այն դարաշրջանում ծագած ուտոպիաների ուսումնասիրությունները վկայում են, որ պատմության թատերաբեմում դրանց հայտնվելը որոշակի օրինաչափություն է. օրինակ՝ Պլատոնի «Պետությունը» ի հայտ եկավ Աթենքի պարտության տարիներին՝ ժողովրդավարության անկման փուլում, երբ հասարակական հակասությունները խիստ սրված էին: Թ. Մորը քննադատում էր իրեն չբավարարող անգլիական իրականությունը՝ փորձելով ի ցույց դնել պետության անկման պատճառները և համոզել, որ կարող է գոյություն ունենալ միանգամայն այլ հիմքերի վրա կառուցված հասարակական կարգ, իսկ Թ. Կամպանելլան իր ուտոպիան ստեղծեց Կալաբրիայում ծագած գյուղացիական ըմբոստությանն ի պատասխան, որոնց ծայրահեղ ծանր վիճակը հուզել էր նրան, ուստի կառուցարկեց աստվածապետական մոդելի հասարակություն: Ա. Սեն - Սիմոնի, Շ. Ֆուրիեի և Ռ. Օուենի ժամանակաշրջանի սոցիալական սահմանային իրավիճակն իր դրսևորումը գտավ նրանց նախաբացահայտումներում, որոնք ընդլայնում էին սոցիալական և տնտեսական դաշտում տեսունակությունը: Ֆ. Էնգելսի գնահատությամբ. «Նրանք կարծում էին, որ սոցիալիզմը գերագույն ճշմարտության, բանականության և արդարության գագաթնակետն է, պետք է միայն դրան դրսևորվելու հնարավորություն տալ, և այն կգրավի աշխարհը, և, քանի որ բացարձակ ճշմարտությունը կախված չէ ժամանակից, տարածությունից և մարդկության պատմական զարգացումից, ապա թե որտեղ այն կբացահայտվի, ընդամենը պատահականության արդյունք է»⁵: Յենց այդ շրջանից սկսած՝ ուտոպիաները դարձան սոցիալ-քաղաքական նախագծեր, որոնք միտում ունեին փոխակերպելու գոյություն ունեցող պայմանները, այսինքն՝ ուտոպիան վերածվում էր գործնական տեսության: Այդ նախագծերը վերաբերում էին սոցիալական կյանքի կազմակերպման առաջիկա խնդիրներին, և այդ իմաստով դրանք ոչ թե հեռահար նպատակներ հետապնդող վերացական մտակառույցներ էին, այլ առնչվում էին տվյալ ժամանակներում գործող ու գործառող պետության կատարելագործման խնդիրներին: Իսկ դա նշանակում է, որ ուտոպիաները դառնում էին սոցիալ-քաղաքական դաշտում առկա ապագա

⁵ Энгельс Ф. Развитие социализма от утопии к науке // Маркс К., Энгельс Ф. Соч. Изд. 2-е. Т. 19. М., 1961, с. 201.

ճգնաժամի ախտանիշներ: Փաստորեն, սոցիալիստ-ուտոպիստների գաղափարները վերաբերում էին այդ շրջանի կենսապայմանների փոփոխությանը և բխում հասարակության պահանջներից:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է փաստել, որ սոցիալական ուտոպիաների ձևավորման շարժառիթ կարող են դառնալ հասարակական կյանքի հետզհետե սրվող հակասություններն ու կոնֆլիկտները, որոնք առկա լարվածությունը հաղթահարելու կամ առնվազն նվազեցնելու կարիք ունեն: Այս պարագայում առաջանում է անհեռանկարայնության և անորոշության զգացում, որը վախ է ներշնչում սպասվող ապագայի նկատմամբ: Ուտոպիաներում կառուցարկվում են այնպիսի մոդելներ, որոնք հասարակությանը ետ են պահում այդօրինակ ներքին խռովություններից: Ուտոպիական նախագծերը երևան են հանում փրկության նոր մեթոդներ՝ հնարավորություն տալով ավելի խորն ըմբռնելու սոցիալական իրականությունն ու դրա հնարավոր կառուցարկման եղանակները:

Ինչպես արդեն նշվեց, ուտոպիական նախագծերի ստեղծման կարեվոր պատճառ կարող է լինեն քաղաքական ու տնտեսական տևական անկայունությունը, որի պատճառները բազմաթիվ են և ունեն տարբեր սկզբնաղբյուրներ: Այդպիսի պատճառներից են պետությանը վերապահված գործառնությունների թուլացումը, հասարակական կյանքի պառակտվածությունը, անպաշտպանվածության զգացումը, սոցիալական ըմբոստությունները և այլն: Ուտոպիաների համար պարարտ հող են դառնում նաև աղքատությունը, անարդարությունը, տառապանքը, մի խոսքով՝ էկզիստենցիալ իրավիճակներն ու ապրումները: Էկզիստենցիալ լարվածության հետևանքով մարդիկ հայտնվում են կյանքի իմաստի որոնումների թատերաբեմում, քանի որ գոյատևման նյութական պայմաններից զատ՝ նրանք ունեն նաև երջանիկ և ներդաշնակ ապրելու ցանկություն: Այդ պահանջմունքը բավարարելու նպատակով ուտոպիական նախագծերում ուրվագծվում է այնպիսի կենսաշխարհի, որն ավելի համահունչ է մարդու սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հոգևոր իդեալներին: Հասարակական կյանքի անկայուն վիճակը խաթարում է մարդու՝ անխռով, հանգիստ կյանք կազմակերպելու գործընթացը, նրան հարկադրաբար ներքաշում է գոյատևման պայքարի մեջ, ինչը, բնականաբար, անհատին հնարավորություն չի տալիս գործուն քաղաքական մասնակցություն ունենալու պետության ներքին կյանքը կազմակերպելու գործընթացներին: Այս առնչությամբ, հավանաբար, գոյատևման խնդիրներով ծանրաբեռնված հայոց սոցիումը ևս ինչ-ինչ ուտոպիաների կարիք ունի, որոնք վերափոխիչ ազդեցություն կթողնեն մարդկանց գիտակցության և գործողությունների շարժառիթների վրա: Առավել ևս, որ ուտոպիաների ձևավորման վերոնշյալ պատճառների համալիրը հայ իրականության մեջ ոչ միայն առկա է, այլև տևական ժամանակ հասարակական կյանքի բոլոր ոլորտները կաթվածահար է արել: Կենսունակ և հզոր այլընտրանքային զարգացման մի նոր նախագծի (ուտոպիայի) առաջադրումը հնարավորություններ կստեղծի, որպեսզի անցումային փուլի դժվարությունները դեռ չհաղթահարած հայ հասարակությունը գտնի իր առջև ծառայած մարտահրավերները լուծելու արդյունավետ եղանակ: Բայց դրա համար անհրաժեշտ է ազգային կենսաձևը «նաքրել» արտաքին

ներթափանցումներից, քանի որ միայն ազգային համակեցության և հոգեկերտվածքի շրջանակներում են ձևավորվում ազգային ուտոպիաները: Մանավանդ, որ սոցիալ-քաղաքական դաշտում հեռանկարներ չկերտող հայն իր կյանքն ստիպված կառուցարկում է պետությունից դուրս, անձնական, անհատական ոլորտում: Բայց անձնական կյանքի շրջանակներում նույնքան անձնական ուտոպիաներով ապրող, ներկայի լուսանցքային վիճակները գնահատող և դրանք ի ցույց դնող անհատի հետևից քչերը կգնան և կկիսեն նրա գիտակցության փայլատակումներն ու մտորումները: Ավելին, դրանք չեն դառնա ազգինը և հետևապես չեն ազդի սոցիալական աշխարհի վերակերտման վրա:

Որպես ինքնակազմակերպվող համակարգ՝ հասարակության զարգացումն այլընտրանքային է և չի կարող խուսափել ուտոպիաներից: Ուտոպիան «սոցիալական երևակայությունը» վերածնակերպելու քայլ է, որի օգնությամբ տվյալ հասարակությունը կարծես նախապատրաստվում է նոր վերափոխումների: Ուտոպիական նախագիծը սոցիալ-քաղաքական դաշտում իրականացվող ռիսկային փորձ է, որը, օրինակ, կոմունիստների կողմից գրեթե վերջնագծին հասավ: Կոմունիզմը պատմական պատահականություն կամ որոշակի իրադարձությունների հետևանք չէր. այն սկզբում քնահաճություն էր և պառակտման արդյունք, իսկ վերջում դարձավ ճակատագրական⁶: Այդ փորձերն իրենց ետևից տանում են մարդկանց հոծ բազմություններ, որոնց շնորհիվ գոնե հնարավոր է սոցիալ-քաղաքական այդ անկայուն դաշտում թեկուզ չնչին, բայց առաջընթացի հույս ներշնչել և ապացուցել, որ պետք են անհապաղ փոխակերպումներ:

Ուտոպիան անհրաժեշտ է որպես սոցիալական ձևակերտվածք, որն ի ցույց է դնում պատմության այլընտրանքային ուղիներն ու սոցիալական ստեղծագործականության հնարավորությունը: Ուտոպիայի կենսունակության գրավականը սոցիալական ճշմարտության, արդարության և բարիքի հաստատման ուղիների անհատում փնտրտուքն է: Այդ երևույթը ճիշտ գնահատելու և խորքային պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է այն ուսումնասիրել սոցիալականության փոփոխման համատեքստում և ոչ երբեք դրանից կտրված ու առանձնացված:

Այսօր ուտոպիաները նոր առանձնահատկություններ են ձեռք բերում՝ դառնալով մշակույթի, կյանքի նկատմամբ օգտապաշտական վերաբերմունքի, հակապատմականության, ապակառուցողականության և նմանատիպ այլ երևույթների այլընտրանք: Ուտոպիստներն իրենց ստեղծագործություններով ցանկանում են մարդկանց մղել աշխարհը վերակերտելու. այստեղ նոր մարդ է դաստիարակվում, ով միգուցե կարողանա իր առջև ծառայած խնդիրներին նայել այլ դիտակետից և հաղթահարել դրանք: Ազդելով մարդկանց գիտակցության վրա՝ ուտոպիան ձգտում է հասարակության հետագա զարգացումը տանել կատարելագործման ուղիով:

Առկա իրավիճակին հատուկ է փիլիսոփայական մարդաբանության տված անվանումը՝ «homo zwischen», ինչը տատանվող, կասկածող մարդու բնութագիրն է, ով իր կյանքը որոշարկող հասարակական կառույցների ու ինստիտուտների փլուզմանը զուգընթաց, անորոշության վիճակում

⁶ Տե՛ս **Аинса Ф.** Реконструкция утопии. М., 1999, էջ 326:

ստիպված է ընդունել կտրուկ որոշումներ, ինչի հետևանքով մարդն ինքը պետք է ստեղծի իր աշխարհը, որը հենց ուտոպիայի առաջնային սկզբունքներից է: Գնալով խորացող սոցիալական ճգնաժամերն ընդլայնում են ուտոպիայի դրսևորման ասպարեզներն ու ընդգծում մեզանում առկա ու անհապաղ լուծման կարիք ունեցող հակասությունները:

Հանգուցային բառեր - *ուտոպիա, սոցիալական ճգնաժամ, սոցիալական իդեալ, իդեալական հասարակություն, ուտոպիական գիտակցություն, ուտոպիական նախագիծ, սոցիալական իրականության կառուցարկում, ապագա*

МЕРИ МИКАЕЛЯН – Утопия как синдром социального кризиса. – Утопия дает человеку возможность представлять свое будущее с позиций идеального и раскрывает новые перспективы, делая их доступными. В статье представлена непосредственная связь утопии с социальным кризисом: в периоды социальных катастроф люди с надеждой и ожиданием перемен пытаются создать новое, что является своего рода бегством от нежелательной реальности. В тяжелых социальных ситуациях возникает острое ощущение бесперспективности, вследствие чего активизируется утопическое сознание. Хотя утопические идеи выдвигаются отдельными мыслителями, они отражают широко распространённые настроения и соответствуют стремлениям общества. Непрерывный поиск социальной истины, справедливости и блага – залог жизнеспособности утопии.

Ключевые слова: *утопия, социальный кризис, социальный идеал, идеальное общество, утопическое сознание, утопический проект, конструирование социальной реальности, будущее*

MERI MIKAYELYAN – Utopia as a Syndrome of Social Crisis. – Utopia allows people to imagine their future from the idealistic perspective and opens new opportunities, which become available for the humankind. The direct connection of utopia with the social crisis is shown in the article: during the social disasters people with incredible hope and anticipation try to create something new, this is a kind of escape from reality. In the complex social events, the perception of unperspectiveness arises and inevitably highlights, as an outcome of which a development of utopian consciousness is stimulated. In spite of the fact, that utopian ideas are presented by individual thinkers, they are the result of the public emotional stance and thereby correspond to public aspirations. The viability of utopia is a ceaseless quest for the strict establishment of social truth, justice and good.

Key words: *utopia, social crisis, social ideal, an ideal society, utopian consciousness, utopian project, construction of social reality, future*